ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.08.2020
346-14

ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ
Պարոն Դմիտրի Մարիյասինին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարիյասին,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել քաղաքացի Մովսես Արիստակեսյանը՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում:

Նա նշել է, որ հայտ է ներկայացրել ՄԱԶԾ՝ մասնակցելու Ազգային ժողովի հանրային ֆինանսների ազգային փորձագետի՝ թափուր հաստիքի համար հայտարարված մրցույթին: Լսելով, որ թափուր պաշտոնի համար թեկնածուն արդեն ընտրվել է, և իր հայտի մերժման վերաբերյալ որեւէ գրություն չստանալով՝ 2020թ. հուլիսի 27-ին դիմել է ՄԱԶԾ՝ մրցույթի հետ կապված մի քանի հարցադրումով:

Չստանալով պատասխան իր գրավոր հարցմանը՝ քաղաքացին 2020թ. օգոստոսի 6-ին ուղարկել է երկրորդ էլեկտրոնային նամակը ՄԱԶԾ-ի registry.am@undp.org, jobs.application@undp.org էլ-փոստերին: Մինչ օրս քաղաքացին իր հարցմանը որեւէ պատասխան չի ստացել:

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների համաձայն՝ խնդրում ենք տեղեկություն տրամադրել քաղաքացու կողմից ներկայացված հետևյալի հարցերի վերաբերյալ.

1. Արդյոք Մովսես Արիստակեսյանի հայտը դիտարկվե՞լ է, եթե ոչ՝ ապա ինչու՞:
2. Ի՞նչ գնահատականի է արժանացել քաղաքացու հայտը՝ ըստ հայտարարված չափանիշների:
3. Ո՞վ է եղել մրցույթի հաղթողը: Խնդրում ենք հրապարակել մրցույթի հաղթողի անունն ու նրա հայտի գնահատականը՝ ըստ հայտարարված չափանիշների:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել **բացառապես** ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան